Արձանագրություն N 2

ՀՀ Քննչական կոմիտեի կողմից ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀ ՔԿ ԷԱՃԾՁԲ-ՆԱ-22/1** ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5

06 ապրիլի 2022թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Թևոսյան, Կ. Մարտիրոսյան, Ա. Հայրապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Նազարյան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	*Չափաբաժնի անվանումը*	*Գնման հայտով սահմանված գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)*
1	ներքին աուդիտի ծառայություններ	4 000 000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 04.04.2022թ.-ին ժամը 14:00-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 05.04.2022 թ.-ին ժամը 14:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) ըստ չափաբաժինների և հասցեները.

Հ/հ	*Մասնակիցների անվանումները*	*Հասցեներ*
1	Ֆոր Էյ Քնսալթինգ ՓԲԸ	ՀՎՀՀ՝ 00148693, ք. Երևան Նալբանդյան 50/136, info@4aconsulting.am , հեռ. 010 52 08 47
2	ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 00131856, ք. Երևան, Նորագավիթ 13 փողոց, տուն 21/1, globaudit@mail.ru , հեռ. 095-48-00-47
3	Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 02618043, Արգիշտի 7, Դոմ Մոսկվի, general@asatryans.com , հեռ. 099 54 33 88
4	ՊԻ ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 00419022, ք. Երևան, Վարդանանց 18/1, գրասենյակ 54, auditservicellc@gmail.com , հեռ. 011 57 75 44
5	ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 01035542, ք. Երևան, Գայի 31, հեռ. 095 08 16 08
6	Ջուզեպպե ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 01034318, ք. Երևան, Հ. հովհաննիսյան 24/7, Guiseppemalimenti@yandex.com , հեռ. 055 75 54 55

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ՔԿ ԷԱՃԾՁԲ-ՆԱ-22/1 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

eauction.armeps.am համակարգի միջոցով հրավերով նախատեսված հարցումներ չեն եղել:

6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Հ/հ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
			Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	1.Ֆոր էյ Քնսալթինգ ՓԲԸ	4 000 000	3800000	20 %	4560000	2910000	20 %	3 492 000	
	2.ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ ՍՊԸ		4000000	20 %	4800000	3099000	20 %	3 718 800	
	3.Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ		12500000	20 %	15000000	12500000	20 %	15 000 000	Մերժված
	4.ՊԻ ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս ՍՊԸ		14800000	20 %	17760000	14800000	20 %	17 760 000	Մերժված
	5.ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ ՍՊԸ		111111111	0 %	111111111	111111111	0 %	111 111 111	Մերժված
	6.Ջուզեպպե ՍՊԸ		360000000	20 %	432000000	360000000	20 %	432 000 000	Մերժված

Աճուրդն ամփոփվել է 05.04.2022թ-ին և Համակարգի կողմից

- 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել **Ֆոր էյ Քնսալթինգ ՓԲԸ-ն:**

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը, արձանագրեց, որ

1. Համակարգի կողմից **1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ֆոր էյ Քնսալթինգ ՓԲԸ-ի հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝**

- Ներկայացրած հավելված 1.2-ում (այսուհետ՝ Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր) հավելվածի մասում գրված է «գնանշման հարցման հրավերի» բառերը, սակայն պետք է լինի «էլեկտրոնային աճուրդի հրավերի» բառերը:
- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի «քաղաքացիությունը» պահանջող բոլոր տեղերում գրված է եղել «Հայ», սակայն պետք է գրվի «Հայաստանի Հանրապետություն»:
- Ներկայացրած Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 4.3.3 և 4.4.3 կետերում Վարչատարածքային միավորը պետք է գրվի «Երևան», 4.11.3 և 4.12.3 կետերում Վարչատարածքային միավորը պետք է գրվի «Արարատի մարզ»:
- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի մեջ նշված իրական շահառու Հայկ Բաբայանի վերաբերյալ տվյալները ենթակա չեն լրացման, քանի որ 20 և ավելի տոկոսի դեպքում է լրացվում իրական շահառուների տվյալները:
- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի օրինակելի ձևը և համարակալումը պահպանված չէ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև **Ֆոր էյ Քնսալթինգ ՓԲԸ** ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ 06.04.2022թ.-ին նիստը կասեցնել՝ Համակարգի միջոցով ծանուցել **Ֆոր էյ Քնսալթինգ ՓԲԸ**-ին, մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

8.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել 11.04.2022թ. ժամը 15:30-ին, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

9. 11.04.2022թ. ժամը 15:30-ին նիստը վերսկսելու վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 11.04.2022թ. ժամը 15:30-ին: Հանձնաժողովն ուսումնասիրեց և արձանագրեց, որ **Ֆոր Էյ Քնսալթինգ ՓԲԸ-ն** սահնանված ժամկետում ներկայացրել է շտկման ենթակա փաստաթղթերը:

Հանձնաժողովը որոշեց՝

1. **Ֆոր Էյ Քնսալթինգ ՓԲԸ-ի** հայտը 1-ին չափաբաժնի մասով գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝0:

10. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

11.04.2022թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝

- 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **Ֆոր Էյ Քնսալթինգ ՓԲԸ-ին** հայտարարել որպես ընտրված մասնակից:

10.2 Հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

10.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____

անդամներ՝ _____ **Սոնա Թևոսյան**

_____ **Կատյա Մարտիրոսյան**

_____ **Արթուր Հայրապետյան**

քարտուղար՝ _____ **Սիրուշ Նազարյան**